ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐ ԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Երևան 2016

ՄՇԱԿՎԱԾ Է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կրթական բարեփոխումների և որակի վարչության կողմից։

ԿԱՏԱՐՈՂ՝

Ավագյան Մ. Հ. , Կրթական բարեփոխումների և որակի վարչության պետ
Մարգարյան Է. Կրթական բարեփոխումների և որակի վարչության մասնագետ
Նալբանդյան Ռ. Կրթական բարեփոխումների և որակի վարչության մասնագետ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԵՎ ԵՆԹԱԿԱ Է ԿԻՐԱՌՄԱՆ

ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման ավանդական եղանակը իրենից ներկայացնում էր ուսուցչակենտրոն ուսուցում, որը հաշվի էր առնում, թե որքան լավ են սովորողները յուրացրել նյութը: Առարկայական նկարագրերը հիմնականում անդրադառնում էին այն դասընթացի բովանդակությանը, որը որ պետք է դասավանդվեր այդ դասախոսության ընթացքում: Այնուամենայնիվ, ուսուցման այս մոտեցումը ուներ իր բացասական կողմերը, ըստ որի դժվար կլիներ բացահայտել, թե ինչ պետք է ուսանողը կարողանա անել դասընթացի ավարտից հետո: Սակայն շուտով ուսուցման ուսուցչակենտրոն մոտեցմանը եկավ փոխարինելու ուսանողակենտրոն մոտեցումը: Այս մոտեցումը արդեն ուշադրություն էր դարձնում այն հանգամանքին, թե ինչ է ակնկալվում ուսանողից, որպեսզի նա կարողանա անել դասընթացի ավարտից հետո: Այսինքն, այս մոտեցումը վերաբերում էր վերջնարդյունքահեն մոտեցմանը: Ուսումնառության ակնկալվող արդյունքներ կամ պարզապես վերջնարդյունքները օգտագործվեցին արտահայտելու, թե ինչ է ակնկալվում սովորողներից, որպեսզի նրանք ի վիճակի **լինեն** անելու ուսումնառության վերջում:

Գոյություն ունի վերջնարդյունքների բազմաթիվ սահմանումներ, սակայն մենք հինք կընդունենք §Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգն¦ օգտագործողի ուղեցույցի (ECTS Users Guide, 2015) հետևյալ սահմանումը, ըստ որի՝

Կրթական վերջնարդյունքը (այսուհետ՝ ԿՎ) գիտելիքի, կարողությունների և հմտությունների համակցությունն է, որը ցույց է տալիս, թե ինչ կիմանա, կհասկանա և կկարողանա անել սովորողը ուսումնառության ավարտին:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՈՐՈՇՎՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Կրթական վերջնարդյունքները որոշվում են հաշվի առնելով առարկայի նպատակներն ու խնդիրները:

Դասընթացի նպատակը նրա բովանդակության ընդհանրական նկարագրություն է: Այն սովորաբար արտահայտում է դասախոսի մտադրությունը, որում պետք է նշվի դասընթացի ընդհանուր ուղղությունն ու բովանդակությունը: Նպատակը սահմանելիս պետք է ընդհանրական կերպով նշվի, թե ինչ թեմաներ է դասախոսը մտադիր դասավանդել ուսուցման պրոցեսում: Այլ կերպ ասած, նպատակը կարելի է ներկայացնել իբրև բոլոր խնդիրների ընդհանրական նկարագրություն:

Օրինակ՝ կրթական ծրագրի մոդուլի նպատակը կարող է լինել «Ներկայացնել ուսանողներին ատոմի կառուցվածքը»:

Դասընթացի խնդիրները նպատակից բխող մասնավոր և կոնկրետ դրույթներ են, որոնք արտացոլում են այն առանձնահատուկ շրջանակները, թե ինչ է դասախոսը մտադիր դասավանդել:

Դասընթացի խնդիրները սահմանելու տարբեր մոդելներ են մշակվել, որոնցից մեկն է ABCD մոդելը:



- Նախ պետք է հստակորեն սահմանել /հասկանալ , թե ում համար է նախատեսված դասավանդումը՝ լսարանի սեռը, հետաքրքրությունները, գիտելիքների նախնականմակարդակը և այլն:

- Ինչ եք դուք ցանկանում, որ սովորողները կարողանան անել Ձեր դասավանդման արդյունքում, ինչպիսի վարքագիծ եք ակնկալում
- Վարքագիծը սահմանելիս կարելի է օգտվել Բլումի տաքսոնոմիայից (տես էջ 17)

- Ցույց է տալիս ինչ հանգամանքներում է դասավանդողը ակնկալում սովորողներին ցուցաբերել տվյալ տվյալ հմտությունը, կարողությունը կամ գիտելիքը:

- Չափանիշը, որով կարելի է չափել սովորողի կատարողականը:

Խնդիրները պետք է լինեն **S M A R T:** Այլ կերպ ասած՝



Հետևաբար նպատակը հնարավորություն է տալիս հասկանալու առարկայի ընդհանրական մտադրությունը, իսկ խնդիրները տալիս են մասնավոր տեղեկատվություն առարկայի մտադրության վերաբերյալ: Յուրաքանչյուր նպատակից հնարավոր է բխել մի քանի խնդիր:

Ի տարբերություն խնդիրների՝ վերջնարդյունքները պարզ և հստակ սահմանված ակնկալվող արդյունքներն են այն մասին, թե սովորողը ինչ պետք է ձեռք բերի և ինչպես ցուցաբերի դրանք ուսումնառության ավարտից հետո: Ուստի, վերջնարդյունքները առավել ճշգրիտ են, հեշտ կազմվող և ավելի պարզ ձևակերպված, քան խնդիրները: Հարկ է նշել, որ վերջնարդյունքները ցույց են տալիս, թե ուսանողը որքանով է կոմպետենտ այդ առարկան ավարտելուց հետո, թե ի վերջո ուսանողը ինչ է սովորել այդ առարկայից, իսկ խնդիրները ցույց են տալիս, առարկայի մտադրության առավել մասնակի ուղիները, թե ինչ է դասավանդվելու դասախոսի կողմից: Ավելին, վերջնարդյունքները ընդգծում են այն

գործողությունները, որոնք որ կատարվում է ուսանողների կողմից, քան թե դասախոսի, իսկ խնդիրները հակառակը՝ ընդգծում են դասախոսի կողմից կատարվելիք գործողությունները:

ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ ԵՎ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱ

Գրականության որոշ աղբյուրներում <<կոմպետենցիա>> տերմինը ասոցացվում է վերջնարդյունքների հետ: Այդ իսկ պատճառով էլ դժվար է գտնել հստակ սահմանում կոմպետենցիա հասկացության համար: Որոշ դեպքերում այն նկարագրում է, թե որքանով է ուսանողը ընդունակ ներկայացնելու իր գիտելիքը, հմտություններն ու կարողությունները: Իսկ օրինակ Որակավորումների Ազգային Շրջանակը (ՈԱՇ) այն սահմանում է որպես կարողություն, ըստ որի սովորողը իր գիտելիքը, հմտություններն ու անհատական, սոցիալ և/կամ մեթոդական կարողությունները օգտագործում է աշխատանքում կամ ուսումնառության ընթացքում՝ մասնագիտական և անհատական զարգացման համար: ՈԱՇ-ի համատեքստում կոմպետենցիան նկարագրված է պատասխանատվության և ինքնուրույնության տեսանկյունից: Կոմպետենցիաները բաժանվում են առարկայի մակարդակով սահմանված կոմպետենցիայի (բնորոշ է միայն տվյալ առարկային) և ընդհանրական կոմպետենցիայի (ընդհանուր են ցանկացած մասնագիտության առարկայի համար):

§Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգն¦ օգտագործողի ուղեցույցում (ECTS Users Guide, 2015) նշվում է, որ կրթական վերջնարդյունքը արտահայտում է կոմպետենցիայի ուսանողի կողմից ձեռք բերված մակարդակը և ստուգված լինելը գնահատման միջոցով: ԿՎ-ները ձևավորվում են դասախոսական անձնակազմի կողմից, որը ներառում է նաև ուսանողներ և այլ շահեկիցներ: Քանի որ դեռևս տարածված չէ կոմպետենցիա տերմինի հստակ սահմանումն ու հասկացումը, վերջնարդյունքները սկսեցին առավել հաճախ օգտագործվել առարկայական նկարագրերում՝ սահմանելով, թե ինչ է ակնկալվում ուսանողներից, որպեսզի նրանք իմանան, հասկանան և ի վիճակի լինեն ցուցաբերելու ուսումնառության ավարտից հետո:

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԵԼ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Ինչպես արդեն իմացանք, ԿՎ-ն նկարագրում է, թե ուսանողը ինչ կիմանա, կհասկանա և/կամ կկարողանա անել դասընթացի ավարտից հետո: Ուստի և առանձնահատուկ ուշադրություն է անհրաժեշտ դարձնել դրանց սահմանման գործընթացի վրա: Ստորև ներկայացված է անավարտ ցանկ, որի օգտակարությունը ապացուցված է բազմաթիվ մեթոդներով:

- ԿՎ-ները պետք է համարժեքորեն արտահայտեն առարկայի բովանդակությունը, խնդիրները, նպատակը:
- ԿՎ-ները պետք է լինեն հակիրճ, բայց միևնույն ժամանակ ոչ շատ մանրակրկիտ ձևակերպված:
- ԿՎ-ները պետք է լինեն համահունչ մեկը մյուսին:
- ԿՎ-ները պետք է լինեն հեշտ ընկալելի և վերահսկելի այն առումով, թե ի վերջո ինչ է ձեռք բերելու ուսանողը դասընթացի ավարտից հետո:
- Նախադասությունները լավ կլինի կազմել շատ կարճ ու պարզ, բոլորին հասկանալի լեզվով, անհրաժեշտ է հիշել, որ դրանք պետք է հասկանալի լինեն նույնիսկ առարկային անծանոթ փողոցում քայլող ցանկացած մարդու:
- ԿՎ-ները պետք է լինեն իրագործելի նշված ծանրաբեռնվածության շրջանակներում:
- Համոզվեք, որ ԿՎ-ները համահունչ են դասընթացի նպատակին, բովանդակությանը և շաղկապված են ծրագրի ԿՎ-ների հետ:
- ԿՎ-ները պետք է նաև համահունչ լինեն համապատասխան ուսումնառության քայլերի, գնահատման մեթոդների և գնահատման չափանիշների հետ:
- Չկան հստակ սահմանված կանոններ, թե որքան պետք է սահմանվեն ԿՎ-ներ առարկայի մակարդակով: Փորձը ցույց է տալիս, որ 4-8-ը բավարար են (2 կրեդիտ՝ 4ԿՎ, 6 կրեդիտ՝ 8ԿՎ): Ընդհանուր առմամբ, դա կախված է առարկայի ծանրաբեռնվածությունից և դասավանդման նպատակներից:

- ԿՎ-ների ձևակերպման լայնորեն տարածված եղանակը հիմնված է հետևյալ հիմնական տարրերի վրա՝
    - Անհրաժեշտ է օգտագործել ակտիվ կամ ներգործուն բայեր՝ արտահայտելու թե ինչ է ակնկալվում որպեսզի ուսանողները իմանան և ունակ լինեն անելու (այսինքն՝ սովորողները կարող են <<նկարագրել>>, <<իրականացնել>>, <<հետևություն անել>>, <<պլանավորել>> և այլն): Լավ կլինի յուրաքանչյուր ԿՎ-ի համար օգտագործել մեկ ակտիվ բայ (*մանրամասն տեղեկության համար տես Բլումի տաքսոնոմիան):*
    - Անհրաժեշտ է խուսափել այնպիսի բայեր օգտագործելուց, որոնք ունեն երկակի կամ միգուցե մի քանի իմաստներ, քանի որ ինչպես արդեն գիտենք ԿՎ-ն պետք է լինի չափելի և թափանցիկ: Այդպիսի բառերից են օրինակ՝ *իմանալ, սովորել, հասկանալ, ծանոթ լինել, իրազեկ լինել, արժևորել և այլն*: Սրաք կոչվում են այսպես ասած §վատ¦ բառեր:
    - Պարզաբանում է, թե տվյալ վերջնարդյունքը ինչին է վերաբերում՝ գիտելիք, թե հմտություն ձեռք բերելուն, այսինքն՝ կարող է <u>բացատրել</u> *կոշտ սկավառակի բաղադրիչների ֆունկցիաները*, կամ կարող է <u>ներկայացնել</u> *հյուրասենյակի ձևավորումը ձեռքով*):
    - Հստակեցնում է ԿՎ-ի ձեռքբերման ուղիները (այսինքն՝ *մշակել հետազոտական դիզայն կիրառելով ժամանակակից գիտական մեթոդներ*):
- Ամենակարևորը անհրաժեշտ է հիշել, որ ԿՎ-ն պետք է ներկայացնի ուսանողների կարողության այն մինիմալ չափը, որի դեպքում ուսանողը հաջողությամբ կավարտի տվյալ դասընթացը:

ՎԱՏ ԵՎ ԼԱՎ ՁԵՎԱԿԵՐՊՎԱԾ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ

Այժմ, հետևյալ օրինակում եկեք համեմատենք վատ և լավ ձևակերպված վերջնարդյունքները և դուք ինքներդ կտեսնեք տարբերությունները:



Ուսումնասիրենք առավել մանրամասն:





ՎԱՏ: Ուսանողը ի վիճակի կլինի վերլուծել և մեկնաբանել մարքեթինգային տվյալները օգտագործել վիճակագրական համակարգչային ծրագիրը, արդյունավետորեն ներկայացնել ստացված արդյունքները հաշվետվության և բանավոր ներկայացման միջոցներով:

- **ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ:** Այս պնդումը ներառում է մի շարք հմտություններ, որի պատճառով որոնց գնահատումը բարդանում է: Վիճակագրական վերլուծություն, գրավոր և բանավոր հաղորդակցություն-սրանք այն կարևոր հմտություններն են, որոնց անհրաժեշտ է տարանջատել:

ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՁԵՎԱՉԱՓ

Այժմ եկեք քննարկենք, թե ինչ ձևաչափով են կազմվում կրթական վերջնարդյունքները: Ամենասկզբում, երբ հերթը արդեն հասել է վերջնարդյունքների սահմանմանը, լավ կլինի, եթե ինքդ քեզ խորհես հետևյալ հարցերի շուրջ՝

1. Ինչպես կնկարագրեիր իդեալական դասընթացի շրջանավարտի հատկանիշները: Ինչպիսի եզակի ուժեղ կողմեր կցանկանայիր տեսնել նրանց մեջ դասընթացի ավարտից հետո:
2. Ի՞նչն է էական, որպեսզի ուսանողները իմանան և ի վիճակի լինեն անելու դասընթացի վերջում: Ի՞նչ կարևոր գիտելիք, հմտություններ և կարողություններ կամ արժեքներ պետք է ուսանողները ունենան դասընթացի վերջում:

Այս հարցերի պատասխանները ունենալով, մոտավոր պատկերացնելով, թե ինչ ես ուզում, որպեսզի ուսանողները ունենան անցում ես կատարում հետևյալ ձևաչափին՝ մտքերդ հստակ ձևաչափով շարադրելու համար:

Դասընթացի վերջում ուսանողը ունակ

_____ + _____

այստեղ պետք է գրել գործողություն ցույց տվող բայը

այն գիտելիքը, հմտություններն ու կարողությունները, որոնք որ ուսանողը ձեռք կբերի ուսումնառության վերջում

Ակտիվ բայ

Ձևավորված գիտելիք/հմտություն/կարողություն

Օրինակներ.

1. Դասընթացի վերջում ուսանողները ունակ կլինեն ամփոփ ***ներկայացնել*** այն հիմնական ուժերի մասին, որոնք կանխարգելու են Չինաստանի տնտեսական իշխանության հզորացումը համաշխարհային շուկայում:

Ակտիվ բայ

Ձևավորված գիտելիք/հմտություն/կարողություն

2. Դասընթացի վերջում ուսանողները ունակ կլինեն ***վերլուծել և մեկնաբանել*** վիճակագրական տվյալները, որպես կազմակերպությունում որոշումների ընդունմանը աջակցող միջոց:

Ձևավորված գիտելիք/հմտություն/կարողություն

Առավել պարզ ներկայացնենք հետևյալ աղյուսակի միջոցով: (Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների իրականացումը Հայաստանում, TEMPUS «ԱՐՄԵՆՔԱ» նախագիծ)

Ակտիվ/ գործողության բայ	Թեմա/ առարկա	Մակարդակը/ չափը	Տիրույթը/ համատեքստը
Վերարտադրել (գիտելիք)	քաղաքական նյութերի բովանդակությունը	ընդհանուր գծերով	հայկական մամուլից վերցված

Դասընթացի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ընդհանուր գծերով վերարտադրել հայկական մամուլից վերցված քաղաքական նյութերի բովանդակությունը:

Ընդհանրացնելով նշենք, որ կրթական վերջնարդյունքների 4 հիմնական բնութագրերն են՝

- Գործողության բայ, որը մատնանշում է ***ԿՎ-ի տեսակը***՝ գիտելիք և իմացություն, դրանց կիրառությունը, կարողություններ (վերլուծելու, գնահատելու, սինթեզելու), հմտություններ և այլն,
- ԿՎ-ի թեմատիկ *ոլորտը* – կարող է լինել խիստ կոնկրետ կամ ընդհանուր և վերաբերվել որոշակի բնագավառի, առարկայի, գիտելիքի նեղ բնագավառի կամ կոնկրետ կարողությունների
- ԿՎ-ի ձեռքբերման ակնկալվող *մակարդակը*, չափը, ծավալը և այլն:
- ԿՎ-ի տիրույթը, շրջանակը և/կամ *համատեքստը*:

Կրթական վերջնարդյունքները ավելի ճիշտ հասկանալու համար մեզ օգնության է գալիս Բ. Բլումի հանրաճանաչ տաքսոնոմիան: Այն իրենից ներկայացնում է երեք աստիճանական մոդելների համակարգ, որոնք հնարավորություն են տալիս հասկանալու, թե ինչ սկզբունքով է կազմվում և ընդհանրապես ինչ է իրենից ներկայացնում կրթական ելքային արդյունքը: Նրա նպատակն է եղել, ստեղծել մի այնպիսի համակարգ, որը հնարավորություն կտա առաջ քաշել մտածողության առավել բարձր մակարդակի վարքի ձևեր, ինչպիսիք են օրինակ վերլուծելն ու գնահատելը:

Ուստի ԿՎ-ները հնարավորություն են տալիս պարզաբանել ուսանողի վարքը հետևյալ *երեք տիրույթներում:*

1. Իմացական - ներառում է մտածական գործընթացները՝ հասկացում, վերլուծում, գնահատում
2. Հուզական - ներառում է վերաբերմունք, զգացումներ և արժեքներ ցույց տվող գործընթացներ՝ արժևորում, ընդունում
3. Հոգեշարժողական - ներառում է ֆիզիկական հմտություններ՝ իրականացում, հավաքում, քանդում

Հարկ է նշել, որ այս տիրույթներից հանրաճանաչը իմացական տիրույթն է, որի գլխավոր մշակողը եղել է հենց Բլումը: Այն ներառում է գիտելիքը և ինտելեկտուալ հմտությունների զարգացումը: Իմացական տիրույթը իրենից ներկայացնում է 6 հիմնական մակարդակ, որը սկսում է մտածողության վարքի ամենապարզ մակարդակից և բարձրանում՝ ամենաբարդ:

Դրանք են՝


ԳՆԱՀԱՏՈՒՄ
ուսանողը կարող է իրականացնել դատողություններ ինչ-որ բանի վերաբերյալ
ՀԱՄԱԴՐՈՒՄ
ուսանողը կարող է ստեղծել մի նոր գիտելիք՝ վերլուծության արդյունքից ելնելով
ՎԵՐԼՈՒԾՈՒՄ
ուսանողը իր ունեցած գիտելիքը կարող է մասնատել մասերի
ԿԻՐԱՌՈՒՄ
ուսանողը կարող է վերցնել ինչ-որ մի բան ինչ-որ մի կոնտեքստից և օգտագործել մյուսում
ԸՆԿԱԼՈՒՄ
ուսանողը հասկանում է այն ինչ գիտի
ԳԻՏԵԼԻՔ
ուսանողը գիտի ինչ-որ բան

Եկեք քննարկենք առավել մանրամասն՝ ներկայացնելով համապատասխան աստիճանին բնորոշ ակտիվ բայերը, որոնք անհրաժեշտ են ԿՎ-ն ճիշտ կազմելու համար:

Գիտելիքի ձեռքբերման մակարդակում սովորողը ճանաչում, նկարագրում, մտաբերում կամ գտնում է ուսուցման ընթացքում ներկայացված տեղեկատվությունը:

Արտահայտել, գիտակցել, ընտրել, վերարտադրել, չափել, որոշել, թվարկել, անվանել, վերհիշել, գրանցել, պնդել և այլն:

Ընկալման մակարդակում սովորողը հասկանում է տեղեկությունը՝ վերափոխելով այն տարբեր ձևերի կամ ճանաչում՝ դրա վերափոխված տարբերակը:

Որոշել, սահմանել, ներկայացնել, բացատրել, հակադրել, նկարագրել, քննարկել, ճանաչել, հիմնավորել, ընտրել, լուսաբանել, դասակարգել և այլն:

Տաքսոնոմիայի *կիրառման* մակարդակում սովորողը տեղեկատվությունը օգտագործում է կոնկրետ գործողության մեջ:

Կանխատեսել, ընտրել, գնահատել, գտնել, ցուցադրել, օգտագործել,կառուցել, հաշվարկել, կիրառել, ցուցաբերել, լուսաբանել, գործնականում իրականացնել, սովորեցնել, կատարել և այլն:

Չորրորդ *վերլուծության* մակարդակում, սովորողը ճանաչում է տեղեկատվության հիմնական կառուցվածքը, տրոհում՝ բաղկացուցիչ մասերի և որոշում՝ դրանց միջև առկա կապերը:

Համեմատել, տարբերակել, համադրել/հակադրել, տրոհել/մասերի բաժանել, վերլուծել, հաշվարկել,փորձարկել, բացահայտել, տարանջատել, լուծել և այլն

Հինգերորդ մակարդակը վերաբերում է *համադրմանը*: Այս մակարդակում սովորողը տեղեկատվություն է ստանում տարբեր աղբյուրներից՝ իր անհատական տեսակետը կամ դիրքորոշումը ձևավորելու նպատակով:

Միավորել/միացնել, ի մի բերել, փաստարկել, հարաբերել/կապ հաստատել, ամփոփել, կազմակերպել/համակարգել, եզրակացնել/եզրահանգել, նախագծել, առաջարկել, վերաձևակերպել, քննարկել, ստանալ/դուրս բերել, մեկնաբանել, ընդհանրացնել և այլն:

Վեցերորդ *գնահատման* մակարդակում սովորողը կարող է չափորոշիչներ կիրառելով կատարել եզրահանգումներ:

Օժանդակել/աջակցել, հակադրել/ համադրել, ընտրել, քննադատել, որոշել, համեմատել, հետևություններ անել, ենթադրել, պաշտպանել և այլն:

Ներկայացնենք ՀՀ Որակավորումների ազգային շրջանակի բնութագրիչների, ԵՈԱՇ բնութագրիչների և Բլումի տաքսոնոմիայի ակտիվ բայերի միջև կապը հետևյալ աղյուսակում: (Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդման և կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրի վերապատրաստման նյութեր)

ՀՀ ՈԱՇ-ի բնութա-գրիչներ	Գիտելիք և ընկալում	Գ + Ը կիրառում	Հաղորդակ-ցում, ՏՀՏ, թվա-բանական հմտություն-ներ	Ընդհանուր ճանաչողական հմտություններ	Ինքնավարություն և պատասխանա-տվություն
ԵՈԱՇ Բնութա-գրիչներ	Գիտելիք	Հմտություն-ներ	Հմտություն-ներ	Հմտություններ	Կարողություն
Ակտիվ բա-յեր, Բլում, Անդերսոն, Կրատվոլ					
Գիտելիք/ հիշել	բացահայտել, կապակցել, թվարկել, սահմանել, վերհիշել, կրկնել, գրանցել, անվանել, ճանաչել, ձեռք բերել				
Ընկալելը/ հասկա-նալը	Վերաձևա-կերպել, տեղակայել, զեկուցել, ճանաչել, բացատրել, արտահայտել, տարբերակել, քննարկել, նկարագրել, վերանայել, եզրակացնել, պատկերա-վոր նկարա-գրել, մեկնաբանել, նկարել, ներկայացնել, տարբերակել, եզրակացնել				

Կիրառու-թյուն/ կիրառում		Կիրառել, բացահատել կապերը, զարգացնել, թարգմանել, օգտագործել, գործարկել, կազմակեր-պել, գործի գցել, վերա-կազմակեր-պել, մեկնա-բանել, մատ-նացույց անել, պատ-կերավոր նկարագրել, կիրառել պրակտի-կայում, հաշ-վարկել, ցույց տալ, ցուցադրել, բեմակա-նացնել			
Վերլուծու-թյուն/վեր-լուծում			Վերլուծել, համեմատել, փորձել, տեղեկանալ, քննել, հակադրել, կատեգորիա-ների բաժա-նել, տարբե-րակել, հակա- դրել, հայտ-նաբերել, հե-տազոտել, դասակարգել, եզրակացնել, փորձարկել, քննադատա-բար ուսում-նասիրել, բա-ցահայտել, ստուգել, վեր-լուծելով առանձնաց-նել, խտրա-		

			կան տարբե- րակել, առանձնաց- նել		
Սինթեզ/ Գնահա- տում				Կազմել, արտադրել, նախագծել, հավաքել, ստեղծել, պլանավորել, հորինել, ձևակերպել, հավաքագրել, հավաքել, ընդ- հանրացնել, փաստաթղթա- վորել, համադրել, կապակցել, առաջարկել, զարգացնել, կարգավորել, կառուցել, կազմակերպել, ծնունդ տալ, բխել, գրել առաջարկու- թյուններ	
Գնահա- տում/ ստեղծում				Դատել, գնահատել ընթացքում, համեմատել, գնահատել վերջում, եզրահանգել, չափել, եզրակացնել, վիճարկել, որոշել, ընտրել, դասակարգել, ընտրել, գնահատել, վավերացնել, համարում, գնահատել արժեքը, որոշել արժեքը, քննադատել, եզրակացնել:	(Ուսանել ինքնու- րույն, պատաս- խանատվություն ստանձնել, կառա- վարել, վերահսկել խմբերի աշխա- տանքը, անորոշ, նորարարական, ինքնավար միջա- վայրում աշխատել բարդ, անկանխա- տեսելի հարցերի շուրջ և լուծել դրանք) Այստեղ հավանա- բար ավելի լավ կլինի ընտրել ոչ թե ակտիվ բայեր, այլ փոխազդեցության եղանակներ:

Հուզական տիրույթ

Հուզական տիրույթը գործ ունի ուսումնառության էմոցիոնալ/ հուզական կողմի հետ՝ ներառելով ուսումնառողների հավատքը, արժեքները, գաղափարները և հայացքները: Այս ասպարեզին համապատասխան բայերն են գործել:

Հոգեշարժողական տիրույթ

Հոգեշարժողական տիրույթը հիմնականում ընդգծում է ուսումնառողների ֆիզիկական հմտությունները՝ համադրելով մկանային գործունեությունն ու ուղեղը: Այս տիրույթը օգտագործվում է այնպիսի մասնագիտություններում, ինչպիսիք են առողջությանը վերաբերող առարկաներ, արվեստ, նկարչություն, ճարտարապետություն, ֆիզիկական կուլտուրա և սպորտին վերաբերող գիտություններ:

ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Դասընթացի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝

- ✓ հստակորեն մեկնաբանել էրգոթերապիայի սկզբունքներն ու կոնցեպցիաները:
- ✓ սահմանված չափանիշներով իրականացնել վոկալ-երգչախմբային աշխատանքներ հանրակրթական դպրոցներում:
- ✓ ճշգրտորեն կիրառել էրգոթերապիայի մոդելները և գործիքները հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հետ աշխատանքում:
- ✓ ճշգրտորեն կիրառել մանկավարժական և հոգեբանական գիտությունների գիտական ավանդույթները կրթական տարբեր ոլորտներում:
- ✓ սահմանել տարրական դասարաններում ուսուցանվող հիմնական մաթեմատիկական հասկացությունները:
- ✓ համակարգված կերպով կազմակերպել կրտսեր դպրոցականների հետ հաղորդակցման համագործակցային եղանակը:
- ✓ դասակարգել երկրաչափական պատկերները՝ ըստ բնութագրիչ հայտանիշների:
- ✓ զուգադրել հայալեզու և օտարալեզու լեզվական և լեզվամշակութային իրողությունները:

ՍՏՈՒԳԻՉ ՑԱՆԿ

Ստուգելու համար, թե արդյոք ԿՎ-ները բավարարում եմ ստանդարտներին, կարող եք օգտվել հետևյալ աղյուսակից: Սա հնարավորություն կտա ավելի պարզ տեսնել, թե ինչ թերություն ունի կազմված վերջնարդյունքը:

	ՍՏՈՒԳԻՉ ՑԱՆԿ	ԱՅՈ	ՈՉ
1	Կենտրոնանալ վերջարդյունքի վրա, այլ ոչ թե գործընթացի		
2	Գրել վերջնարդյունքները հաշվի առնելով, թե ինչ պետք է անի ուսանողը, այլ ոչ թե դասախոսը		
3	Յուրաքանչյուր վերջնարդյունքը սկսվում է գործողություն ցույց տվող բայով		
4	Յուրաքանչյուր վերջնարդյունք սկսվում է մեկ բայով		
5	Վերջնարդյունքը կազմված չէ երկակի կամ բազմակի իմաստ ունեցող բայերով, օրինակ իմանալ, հասկանալ, սովորել		
6	Վերջարդյունքները չափելի և դիտարկելի են		
7	Վերջնարդյունքների քանակը բավարար են		
8	Վերջնարդյունքները անդրադառնում են տվյալ առարկայից ստացվող գիտելիքին, հմտություններին և կարողություններին		
9	Վերջնարդյունքը հնարավորություն է տալիս հասկանալու, թե ուսանողը առարկայի ավարտից հետո ինչ կիմանա /իմացական/ճանաչողական/, կմտածի /հուզական/ և կանի /հոգեշարժական/		
10	Վերջարդյունքները համապատասխանում են ծրագրի և առարկայի նպատաներին		
11	Վերջնարդյունքները ձեռք են բերվում ամբողջ դասընթացը յուրացնելուց հետո		

12	Վերջնարդյունքը հնարավորություն է տալիս մշակել համապատասխան դասավանդման ռազմավարություն		
13	Ընտրված գնահատման մեթոդները համապատասխանում են վերջնարդյունքին		
14	ԿՎ-ն ներկայացնում է ուսանողների գիտելիքի և կարողության մինիմալ չափը, որի դեպքում ուսանողը հաջողությամբ կավարտի տվյալ դասընթացը		